բայի միջև կատարած զուգահեռներով գեկուցողը ցույց տվեց, թե տաղանդավոր կոմպոզիտորն ինչպիսի երկյուղածությամբ և պոեմի ժողովրդային ոգու նուրբ զգացողությամբ է կատարել «Անուշին» երաժշտական մարմնավորում տալու գործը։

Նստաշրջանը վերստին վկայեց, թե մեր ազգային մեծ բանաստեղծը ինչպես է թափանցել հայ արվեստի ոլորտները և դա ինչպիսի հետաքրքիր ասպարեզ է արվեստաբանական ուսումնասիրության համար։

Լ. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ՄԱՇՏՈՑՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՓՆԵԿԻՐԸ

Հուլիսի 2-ին, Օշականի Մեսրոպ Մաշտոցի անվան դպրոցում գումարված ՀՍՍՀ ԳԱ նախագահության ընդլայնված նիստում, հանրապետության գիտական հասարակայնության ներկայացուցիչների և Աշտարակի շրջանի ու Օշականի մտավորականության և բնակչության ներկայությամբ, հանդիսավոր պայմաններում, տեղի ունեցավ հայագիտական լավագույն աշխատության համար սահմանված Մաշտոցյան մրցանակի հանձնումը անվանի հայագետ, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Լ. Ս. Խաչիկյանին։

Հիշյալ գիտական մրցանակը շնորհվում է յուրաքանչյուր հինգ տարվա ընթացքում հայագիտության բնագավառում կատարված առավել ուշագրավ ու ծանրակշիռ աշխատության համար։

Այս առումով էլ դժվարին և պատասխանատու խնդիր էր դրված ՀՍՍՀ ԳԱ հասարակագիտական բաժանմունքի բյուրոյի առաջ, ներկայացված մի քանի, իրենց նշանակությամբ մեկը մյուսին չզիջող, գործերից ընտրելու առավել կարևորն ու հայագիտության մեջ խոշոր ներդրում հանդիսացող աշխատությունը։ Զայների մեծամասնության կենտրոնացումը Լ. Ս. Խաչիկյանի «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» եռահատոր աշխատության օգտին, գալիս է վկայելու, որ ԳԱ հասարակագիտական գիտությունների բաժանմունքը ըստ արժանվույն է գնահատել սովետահայ պատմագրության վերջին տարիների կարևոր նվաճումներից մեկը հանդիսացող այդ մեծարժեք աղբյուրագիտական աշխատությունը, և պատահական չէ, որ գնահատականը հավանության արժանացավ մեր հանրապետության գիտական հասարակայնության և ընդհանուր հայագիտական շրջանակների կողմից։

Ձեռագիր հիշատակարանների հավաքման և դրանց բնագրերի գիտական հրապարակման գործով Լ. Ս. Խաչիկյանը զբաղվել է շուրջ երկու տասնամյակ։ Տարիների համառ ու քրտնաջան բնագրագիտական աշխատանքների առաջին արգասիքը 1950 թ. լույս տեսած «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» ստվար հատորն էր, որից հետո նա անմիջապես ձեռնամուխ եղավ առավել կարևոր աղբյուրագիտական նշանակություն ունեցող ԺԵ դարի հիշատակարանների հավաքման մեծ ու դժվարին գործին։

15-րդ դարը իրավամբ դիտված է որպես հայկական ավատատիրության եզրափակիչ դար։ Ուստի հասկանալի է, որ մեր ժողովրդի վերջին հարյուրամյակների պատմական ճակատագրի սոցիալ-տնտեսական և քաղաքական նախադրյալների բացահայտման բանալին պետք է փնտրել այն բախտորոշ իրադարձությունների և քաղաքական վայրիվերումների մեջ, որոնք եկան վերափոխելու երկրի սոցիալ-քաղաքական ու էթնիկական պատկերը և որոնց շնորհիվ հայ աշխարհիկ ավատատիրական դասը դուրս մղվեց ասպարեզից՝ որպես որոշակի քաղաքական ուժ։

Քաղաքական դժնդակ պայմանների և տնտեսական ու մշակութային կյանքում առաջացած ծանր, անկումային վիճակի հետևանքով վրա հասած հայ պատմագրության գրեթե ամուլ այս շրջանում, ձեռագրաց հիշատակարանները աղբյուրագիտական բացառիկ արժեք են ստանում։ Այս իրողության գիտական խորը հավաստումը տվեց Լ. Խաչիկյանը իր եռահատոր հրապարակումներին առընթեր կատարած ընդարձակ ու բազմակողմանի ուսումնասիրությամբ։ Շարադրվեց հայ ժողովրդի ամենամութ և միաժամանակ ամենասակավ ուսումնասիրված շրջանի պատմությունը, որը կայուն հիմք է հանդիսանում հետագա դարերի պատմության մի շարք բարդ ու հանգուցային հարցերի լուսաբանման համար։ Կատարված է պատմության այդ ժամանակահատվածի սպառիչ ուսումնասիրությունը։ Գիտական շրջանառության մեջ են դրված եզակի արժեք ներկայացնող միանդամայն նոր նյութեր, որոնց աղբյուրագիտական նշանակությունը դուրս է գալիս հայագիտության սահմաններից՝ ճանաչվելով և բարձր դնահատականի արժանանալով ընդհանուր արևելագիտական շրջանակներում։

Հաճելի է նշել, որ Մաշտոցյան բարձր մրցանակի առաջին գափնեկիրը՝ հեղինակն է բազմաթիվ այլ կարևոր գիտական աշխատությունների, մեր հարուստ մատենագրության հմուտ և մեզվաջան հետազոտող ու հայագիտական մտքի փայլուն ներկայացուցիչներից մեկը, և ավելի քան 15 տարի նրան է վստահված ձեռագրագիտական և ազգագրագիտական խոշորագույն և միջազգային հռչակ վայելող հաստատության՝ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրինության լգատվավոր ու պատասխանատու պաշտոնը։

Հայ գրի ու դպրության հիմնադիր անմահ Մեսրոպ Մաշտոցի անունով սրբազործված արժանի մրցանակը կոգեշնչի և ստեղծագործական նոր թավ կհաղորդի բազմավաստակ գիտնականին, նորանոր մեծարժեք աշխատություններով հարստացնելու հայագիտության գանձարանը։

Հ. ՓԱՓԱԶՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՆԱՏԱՇՐՋԱՆ

1969 թ. հունիսին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների հերթական նատաշրջանը, որտեղ կարդացվեցին մի շարք ուշագրավ զեկուցումներ։ Ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Պ. Մայիլյանը իր զեկուցման մեջ անդրադարձավ Անդրկովկասում Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի ուշացման պատճառների լուսաբանմանը՝ սովետահայ պատմագրության մեջ։

«Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Լենինգրադի հերոսական պաշտպանությանը 1941—1943 թվականներին» թեմայով զեկուցում կարդաց կրտսեր գիտաշխատող Մ. Սահակյանը։ Նա ՍՍՀՄ պաշտպանության մինիստրության Պոդոլսկի, Լենինգրադի ռազմածովային ու պատմության ինստիտուտների Հայրենական պատերազմի պատմության արխիվներից հավաքած հարուստ նյութերի հիման վրա, ցույց տվեց, թե 1941—1943 թվականներին Լենինգրադի հերոսական պաշտպանությանը մոտավորապես որքան հայեր են մասնակցել։ Ի դեպ, Մ. Սահակյանը մատնանշեց հայ մարտիկների նոր անուններ, որոնք պատերազմի առաջին իսկ տարում զոհվել էին քաջաբար։

Հայրենական մեծ պատերազմի շրջանի պատմությանն էր նվիրված նաև Լ. Հովնանյանի զեկուցումը։ Նա ընդգծեց ամերիկահայ մամուլի, հատկապես («Լրաբեր» և «Հայաստանի կոչնակ») առաջադիմական թերթերի գերն ու նշանակությունը հիտլերյան զավթիչների դեմ մղված պայքարում։

1904—1917 թվականներին Ամերիկայում անգլերեն լեզվով լույս տեսնող թերթերի գործունեության լուսաբանմանն էր նվիրված կրտսեր գիտաշխատող Դ. Սրապյանի զեկուցումը։ Ելնելով թերթերում զետեղված նյութերի գաղափարական բովանդակությունից, Դ. Սրապյանը բնութագրեց այդ օրգանների քաղաքական ուղղությունը։

Ազգային-ազատագրական պայքարում Գ. Սրվանձտյանի կատարած գերի մասին զեկուցեց ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Է. Կոստանդյանը։ Հարուստ նյութերի հիման վրա նա հանգամանորեն մեկնաբանեց խոշոր բանահավաք, հասարակական գործիչ Սրվանձտյանի գործունեության նշանակությունը ազգային-ազատագրական պայքարում։

Ուշադրությամբ լսվեց ասպիրանտ Է. Դանիելյանի «Աշխարհագրական մատերիալիզմի քննադատությունը» թեմայով զեկուցումը։ Է. Դանիելյանը Լ. Մեչնիկովի «Քաղաքակրթությունը և մեծ պատմական գետերը» գրքի մասնակի օրինակների հիման վրա քննադատեց աշխարհագրական մատերիալիզմը։ Հարցը հիմնավորված լուսաբանելու նպատակով նա վկայաբերեց մարքսիզմ-լենինիզմի կլասիկների դրույթները և ցույց տվեց աշխարհագրական միջավայրի գերն ու տեղը մարդկային հասարակության պատմության մեջ։

Ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Հ. Կարագյոզյանի զեկուցումը նվիրված էր ուրարտական արքաների կատարած հեռավոր արշավանքներին։ Զեկուցողը մեկնաբանեց վայրերի անունները, առաջին անգամ ստուգաբանեց մի քանի տեղանուններ, նշեց Հայկական լեռնաշխարհից դուրս գտնվող այն վայրերը, որտեղ, ինչպես զեկուցողն էր ենթադրում, արշավել էին ուրարտացիները։

Հայ ժողովրդի հին շրջանի պատմության ուսումնասիրությամբ է զբաղվում նաև կրտսեր գիտաշխատող Ժ. Էլչիբեկյանը։ Զեկուցման համար նա ընտրել էր «Ասորիքը Հայաստանի կազմում» թեման։ Երիտասարդ գիտաշխատողը վեր հանեց Սելևկյան թագավորության անկման և Տիգրան II կողմից Ասորիքի գրավման հետ կապված առանձին հարցեր, որոնք մինչ այժմ բավարար ուսումնասիրության չէին արժանացել։

Ա. ՆԱԶԱՐՅԱՆ